



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱԴԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԱՀ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
01.07.2013 թ. (արձանագրություն № 14)

**ՀԱԱՀ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ՀԱԱՀ-ի քաղաքականությունը ուղղված է համալսարանի կողմից իրականացվող գործունեության և գործընթացների վերաբերյալ հաշվետվության ներկայացումը բոլոր շահակից կոմերին:

ՀԱԱՀ-ի կանոնադրության 116 կետի համաձայն, յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ համալսարանը <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում պարտավոր է հրապարակել՝

- հաշվետվություն իր գործունեության մասին: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի, հոգաբարձուների խորհրդի անդամների, տնօրենի և համալսարանի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են համալսարանի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում.
- ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե համալսարանի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մլն դրամը:

ՀԱԱՀ-ի նպատակներն ուղղված են խթանելու համալսարանի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և դրա հիման վրա հետադարձ կապի մեխանիզմով համալսարանի գործունեության որակի բարելավմանը:

ՀԱԱՀ-ի շահակիցների առջև հաշվետվողականությունը հիմնականում ներառում է՝

1. Ֆինանսական հաշվետվողականություն,
2. Կրթական գործունեության հաշվետվողականություն,
3. Գիտական գործունեության հաշվետվողականություն,
4. Համալսարանի Ինքնագնահատման արդյունքների հաշվետվողականություն:

ՀԱԱՀ-ը իր գործունեության հաշվետվողականությունը շահակիցների առջև կազմակերպում և իրականացնում է (տես Հավելված 1)՝

1. Համալսարանի կառավարման խորհրդում,
2. Ֆակուլտետային և համալսարանական գիտական խորհրդի նիստերին,

3. Հրապարակումների միջոցով (համալսարանի տարեկան հաշվետվություն, ընթացիկ գործընթացների հաշվետվություններ, ՀԱԱՀ-ի պաշտոնաթերթ) և այլն:

ՀԱԱՀ-ի կողմից կազմակերպվող հաշվետվողականության միջոցառումները ուղղված են կրթության կատարելագործման և մրցունակության բարձրացման խնդիրների լուծմանը:

ՀԱԱՀ-ի հիմնական խնդիրներից է համալսարանի հաշվետվողականության համակարգի և մեխանիզմների մշակումը:

ՀԱԱՀ-ի հաշվետվողականության գործիքներն են՝

- Համալսարանի պաշտոնական կայքը,
- Համալսարանի պաշտոնաթերթը,
- Համալսարանի գործունեության արձանագրությունները,
- Ընթացիկ և այլ տիպի հաշվետվություններ,
- Բուկլետներ, բրոշուրներ և այլն:

Հետադարձ կապով շահակիցներից ստացված կարծիքները թույլ են տալիս համալսարանին գնահատել իր գործունեության արդյունավետությունը և զարգացնել կրթական համակարգը: Շահակիցների հետ հետադարձ կապը թույլ կտա համալսարանին նվազեցնել ռիսկերը, զարգացնել առավելությունները, պարզել շահակիցների կարիքները և պահանջները:

Հաշվետվողականության պատրաստման փուլերն են՝

- Բաց հաշվետվողականության հրապարակման վերաբերյալ որոշման կայացում,
- հաշվետվողականության պլանավորում,
- նպատակային խմբերի առանձնահատկությունների որոշում,
- տվյալների հավաքագրում և վերլուծություն, տեքստի պատրաստում,
- տպագրությունը և տարածում,
- հետադարձ կապի արդյունքների վերլուծություն և մոտեցումների ու պլանների վերափոխում կամ ուղղում:

Բաց հաշվետվողականությունը համալսարանին թույլ կտա՝

- ներկայացնել համալսարանի կայունությունը և որակի ապահովման ու կառավարման զարգացումը,
- վերլուծել հետադարձ կապի մեխանիզմով ստացված արձագանքները,
- բարելավել և կատարելագործել համալսարանի ծրագրերը իր գործունեության բոլոր ոլորտներում:

ՀԱԱՀ-ի ներքին և արտաքին հաշվետվողականության գրաֆիկական ներկայացում

